ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ԱՍՀՆ ՍՊՊԾ ՏՉԱԻՆ-22

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

քաղ. Երևան 21 02 2011թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արտեմ Ասատրյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. դեկտեմբերի 27-ի N 1531-Ն որոշմամբ հաստատված Ծառայության կանոնադրության հիման վրա, և <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերությունը՝ ի դեմս գործադիր տնօրեն Ավետիս Բալոյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան և այլ պայմաններ

1.1 Սույն պայմանագրում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

1.1.1. **կենսաթոշակ՝** կենսաթոշակի, պատվովճար, դրամական օգնության և սոցիալական ապահովության այլ ծրագրերով նախատեսված դրամական վճարների գումար,

1.1.2. **կենսաթոշակառու՝** անձ, ում կենսաթոշակը վճարվում է անկանխիկ եղանակով՝ կատարողի մոտ իր անունով բացված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

1.2. Կատարողը սույն պայմանագրով պարտավորվում է պատվիրատուից ընդունել և կենսաթոշակառուի բանկային հաշվին մուտքագրել կենսաթոշակի գումարները՝ էլեկտրոնային եղանակով ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված վճարային հաղորդագրության տեսակների միջոցով՝ ըստ պատվիրատուի ներկայացրած՝ սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեղեկատվության (այսուհետ՝ վճարման ցուցակ):

Բանկն իրավունք չունի կենսաթոշակառուին մերժելու սույն պայմանագրին համապատասխան բանկային հաշիվ բացելը և վարելը (բանկային հաշվի պայմանագիր կնքելը):

1.3. Բանկային հաշիվը բացելու և վարելու հետ կապված հարաբերությունները (ներառյալ ծառայությունների վարձավճարները) կարգավորվում են կենսաթոշակառուի և կատարողի միջև կնքված՝ բանկային հաշվի պայմանագրով:

1.4. Կատարողը պարտավոր է կենսաթոշակառուին սպասարկել սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N 2 հավելվածով սահմանված՝ կենսաթոշակների վճարման համար սահմանված նվազագույն ծառայությունների առավելագույն սակագների համաձայն (այսուհետ՝ հիմնական ծառայությունների ցանկ):

1.5. Կատարողը կարող է սահմանել այլ լրացուցիչ ծառայությունների մատուցում, որոնք ներառված չեն հիմնական ծառայությունների ցանկում կամ սահմանել հատուկ պայմաններ հիմնական ծառայությունների համար:

1.6. Այն դեպքում, երբ կենսաթոշակառուն արդեն ունի բացված բանկային հաշիվ կատարողի մոտ (բանկում), ապա կատարողը կարող է նույն հաշվին մուտքագրել կենսաթոշակի գումարը, եթե կարող է ապահովել միաժամանակ հիմնական ծառայությունների մատուցումը:

1.7. Այն դեպքում, երբ կենսաթոշակառուն, իր դիմումի հիման վրա հրաժարվում է իր կենսաթոշակը կատարողից ստանալ հիմնական ծառայությունների համաձայն, ապա կենսաթոշակառուն կարող է օգտվել կատարողի կողմից մատուցվող ծառայություններից: Այս դեպքում պատվիրատուն կատարողին փոխհատուցում չի վճարում:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները՝

2.1. Կողմերը իրավունք ունեն.

2.1.1. սույն պայմանագրով սահմանված կարգով դադարեցնելու պայմանագրի գործողությունը,

2.1.2. օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու մյուս կողմի գործողությունները և (կամ) անգործությունը,

2.2. Կողմերը սույն պայմանագրով նախատեսված դեպքերում միմյանց տեղեկատվություն են տրամադրում գրավոր կարգով՝ առձեռն հանձնելու կամ փոստով ուղարկելու միջոցով (եթե կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, տեղեկատվության տրամադրման այլ կարգ չեն սահմանել):

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. կենսաթոշակը կենսաթոշակառուի բանկային հաշվին մուտքագրել համապատասխան դրամական միջոցներն ընդունելու օրվան հաջորդող բանկային օրվա ընթացքում,

2.3.2. կենսաթոշակառուի մահվան դեպքում, պատվիրատուի պահանջով, որպես սխալ վճարված գումար, ՀՀ պետական բյուջե փոխանցել կենսաթոշակառուի մահվան ամսվան հաջորդող ամիսների համար վճարված կենսաթոշակների գումարները՝ պատվիրատուին տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցված գումարի (իսկ կենսաթոշակառուի բանկային հաշվին բավարար միջոցների բացակայության դեպքում՝ փոխանցման ենթակա՝ սակայն չփոխանցված գումարի) մասին՝

համապատասխան պահանջագիրը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ: Կատարողը պատասխանատվություն չի կրում սխալ վճարված գումարների օգտագործման համար, եթե դրանք օգտագործվել են մինչև կենսաթոշակառուի մահվան մասին տեղեկատվությունն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը (սույն կետի իմաստով մահվան մասին տեղեկատվություն ստանալու օր է համարվում կենսաթոշակառուի մահվան վկայականի պատճենը կատարողին ներկայացնելու կամ սույն պայմանագրի 2.4.2 կետով սահմանված՝ կենսաթոշակառուի մահվան մասին տեղեկատվությունը պատվիրատուից ստանալու օրը),

2.3.3. կենսաթոշակառուի մահվան մասին տեղեկատվություն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ (սույն կետի իմաստով մահվան մասին տեղեկատվության ստանալու օր է համարվում կենսաթոշակառուի մահվան վկայականի պատճենը կատարողին ներկայացնելը) տեղեկացնել պատվիրատուին և դադարեցնել տվյալ կենսաթոշակառուի հաշվով գործառույթների իրականացումը,

2.3.4. կենսաթոշակառուին մատչելի եղանակով անվճար տրամադրել իր բանկային հաշվին մուտքագրված կենսաթոշակի գումարների վերաբերյալ տեղեկատվություն (այսուհետ՝ քաղվածք)՝ առնվազն ամիսը մեկ անգամ,

2.3.5. մինչև յուրաքանչյուր ամսվա հինգերորդ աշխատանքային օրը պատվիրատուին տրամադրել այն կենսաթոշակառուների ցուցակը, ովքեր նախորդ ամսվա ընթացքում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով ներկայացրել են փաստաթուղթը կամ տվել են հայտարարություն: Ընդ որում, կենսաթոշակառուի կողմից հայտարարություն տալ է համարվում նաև առնվազն տարին մեկ անգամ անձամբ կատարողի մոտ ներկայանալը,

2.3.6. յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը պատվիրատուին տրամադրել մինչև տվյալ ամսվա 20-ը (ներառյալ) իր հետ բանկային հաշվի պայմանագիր կնքած և (կամ) սույն պայմանագրի 1.7-րդ կետում նշված դիմում ներկայացրած կենսաթոշակառուների տվյալները:

2.4. Պատվիրատուն պարտավոր է՝

2.4.1. տվյալ ամսվա վճարման ցուցակը կատարողին տրամադրելու օրվան հաջորդող բանկային օրվանից ոչ ուշ կատարողի հաշվին փոխանցել վճարման ենթակա ամբողջ գումարը,

2.4.2. կենսաթոշակառուի մահվան մասին տեղեկատվություն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ կատարողին տեղեկացնել այդ մասին և դադարեցնել կենսաթոշակի վճարումը,

2.4.3. օրենքով սահմանված կարգով ապահովել սույն պայմանագրի շրջանակներում իրեն հայտնի դարձած՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության գաղտնիությունը,

2.4.4. սույն պայմանագրի 2.3.2 կետում նշված գումարների վերադարձման նպատակով կատարողին ներկայացնել սահմանված ձևով վճարման պահանջագիր:

3. Պայմանագրի գինը

Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների համար պատվիրատուն կատարողին վճարում է յուրաքանչյուր կենսաթոշակառուի համար տարեկան երեք հարյուր վաթսուն ՀՀ դրամի փոխհատուցում:

Ընդ որում, պատվիրատուն փոխհատուցման գումարը յուրաքանչյուր անգամ բանկին է փոխանցում միանվագ՝ կենսաթոշակառուի դիմումի հիման վրա տվյալ բանկի միջոցով առաջին անգամ վճարվող կենսաթոշակի գումարի հետ կամ տվյալ բանկին փոխհատուցումը վճարելու ամսվան հաջորդող 12-րդ ամսվա կենսաթոշակի գումարի հետ (եթե կենսաթոշակառուն այդ ընթացքում չի դիմել այլ բանկի միջոցով իր կենսաթոշակը վճարելու համար):

4. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ վեճեր ու տարաձայնություններ առաջանալու դեպքում դրանք լուծվում են տասնհինգ օրվա ընթացքում՝ բանակցությունների միջոցով, իսկ բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և օրենսդրությամբ սահմանված կարգով՝ լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

5.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

5.3. Սույն պայմանագիրը լուծվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ պայմանագիրը կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում: Պայմանագիրը լուծելու առաջարկությունը մի կողմը մյուս կողմին ներկայացնում է պայմանագրի լուծման նախատեսվող ժամկետից առնվազն երկու ամիս առաջ:

Պայմանագիրը լուծելու առաջարկությունը ներկայացնող կողմը պարտավոր է պայմանագիրը լուծելու մասին պատշաճ կարգով ծանուցել

կենսաթոշակառուին առնվազն պայմանագրի լուծման նախատեսվող ժամկետից առնվազն մեկ ամիս առաջ:

Սույն պայմանագիրը լուծվում է պայմանագրով ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով պատճառած վնասները լրիվ հատուցելու պայմանով:

5.4. Սույն պայմանագիրն իրավաբանական ուժ է ստանում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով:

Պատվիրատու՝	Կատարող՝
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար՝	<<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերության գործադիր տնօրեն
Ա.Ասատրյան	Ս.Գրիգորյան
Կ.Տ	Կ.Տ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
կենսաթոշակների վճարման
ծառայությունների
մատուցման պայմանագրի

Ց Ա Ն Կ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԿՈՂՄԻՑ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ

1. բանկի անվանումը,
2. կենսաթոշակառուի անունը, ազգանունը (հայրանունը), անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, սոցիալական ապահովության քարտի կամ սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը, առկայության դեպքում՝ կենսաթոշակառուի փոխարեն կենսաթոշակն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձի անունը, ազգանունը (հայրանունը), անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը,
3. կենսաթոշակառուի բանկային հաշվի համարը,
4. վճարման ենթակա կենսաթոշակի գումարը՝ (այդ թվում՝ տվյալ ամսվան նախորդող ժամանակահատվածի համար)՝ ըստ ժամանակահատվածի և ըստ տեսակների,
5. վճարման ենթակա ընդհանուր գումարը:

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
կենսաթոշակների վճարման
ծառայությունների
մատուցման պայմանագրի

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱԿԱԳՆԵՐԸ

NN ը/կ	Ծառայությունների տեսակը	Առավելագույն սակագինը
1.	Բանկային (քարտային) հաշվի բացում և սպասարկում	անվճար
2.	Քարտերի թողարկում և տրամադրում	անվճար
3.	Բանկային (քարտային) հաշվից միջոցների կանխիկացում (տվյալ բանկի սպասարկման կետերում)	անվճար
4.	Քարտային հաշվից միջոցների կանխիկացում (այլ բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող սպասարկման կետերում)	0.5 %
5.	Քարտի բլոկավորում և ապաբլոկավորում (քարտապանի պահանջով)	անվճար
6.	Բանկոմատի միջոցով քարտի առգրավման դեպքում (բանկի սեփական սպասարկման կետերում) քարտի վերադարձ	անվճար
7.*	Բանկոմատի միջոցով քարտի առգրավման դեպքում (այլ բանկերի սպասարկման կետերում) քարտի վերադարձ	200 ՀՀ դրամ
8.*	ՊԻՆ կոդի վերականգնում	700 ՀՀ դրամ
9.*	Քարտի վերաթողարկում (կորցնելու դեպքում)	900 ՀՀ դրամ
10.	Քարտային գործարքների վերաբերյալ ամսական քաղվածքի տրամադրում	անվճար
11.	Անկանխիկ վճարումների ապահովում	անվճար

Աղյուսակի 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերում նշված ծառայություններն առաջին դեպքի համար մատուցվում են անվճար, իսկ հետագայում՝ աղյուսակում նշված միջնորդավճարի համաձայն, եթե բանկն ավելի նպաստավոր պայմաններ չի առաջարկում:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-ԻՆ ԿՆՔՎԱԾ «ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

քաղաք Երևան 17 նոյեմբերի 2016 թվական

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ պատվիրատու), ի դեմս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետ Արմեն Աբրահամյանի, ով գործում է 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1531-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության կանոնադրության հիման վրա, և «Ինեկոբանկ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ կատարող)՝ ի դեմս գործադիր տնօրեն Տարոն Գանջալյանի, ով գործում է բանկի կանոնադրության հիման վրա, հիմք ընդունելով կողմերի միջև կնքված «Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման» պայմանագրի 5.1-ին կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

I. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Կողմերը համաձայնվել են 2011 թվականի փետրվարի 21-ին կնքված «Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 1.1.1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**1.1.1.** կենսաթոշակ՝ ծառայության միջոցով վճարվող կենսաթոշակի, նաև կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի և կենսաթոշակառուի

մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարներ, պատվովճարի, ամենամսյա պարգևավճարի, ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի և սոցիալական ապահովության այլ ծրագրերով նախատեսված դրամական վճարների գումար.»,

2) 1.2.1-ին ենթակետը «կենսաթոշակառուի» բառից հետո լրացնել «կամ շահառուի» բառերով,

3) 1.2.2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.2.2. պատվիրատուի տրամադրած տվյալների հիման վրա շահառուի անվամբ անվճար բացել բանկային հաշիվ և այդ հաշվում մուտքագրել կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստը, ինչպես նաև կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի, պատվովճարի, ամենամսյա պարգևավճարի, ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի և սոցիալական ապահովության այլ ծրագրերով նախատեսված դրամական վճարների գումարները: Ընդ որում, կողմերն անվերապահորեն ընդունում են, որ շահառուն ավանդատուի (հաշվետիրոջ) իրավունքներ է ձեռք բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 910-րդ հոդվածին համապատասխան՝ դիմողի անվամբ բանկային հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները և վճարման ենթակա գումարն ստանալու օրվան հաջորդող օրվանից հետո, այդ իրավունքների վրա հիմնված առաջին իսկ պահանջը բանկ ներկայացնելու դեպքում, բանկ պահանջ ներկայացնելու ժամանակ, եթե պատվիրատուի ներկայացրած տվյալները համապատասխանում են դիմողի ներկայացրած տվյալներին:»,

4) 2.3.1-ին ենթակետում «կենսաթոշակառուի» բառը փոխարինել «կենսաթոշակառուի կամ շահառուի (եթե շահառուն բանկում արդեն ունի իր անվամբ բացված բանկային հաշիվ)» բառերով,

5) 2.3.7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.3.7. կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստը, ինչպես նաև կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի, պատվովճարի, ամենամսյա պարգևավճարի, ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի և սոցիալական ապահովության այլ ծրագրերով նախատեսված դրամական վճարների գումարները սույն պայմանագրի 1.2.2-րդ

ենթակետում նշված դեպքում շահառուի բանկային հաշվում մուտքագրել ոչ ուշ, քան այդ դրամական միջոցների ընդունման օրվան հաջորդող օրվանից հետո սույն պայմանագրի 1.2.2-րդ ենթակետում նշված պահանջը դիմողի կողմից բանկ ներկայացվելը.»,

6) Պայմանագիրը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.3.8-րդ ենթակետով.

«2.3.8. պատվիրատուին տրամադրել այն անձանց տվյալները, ովքեր շահառուի անվամբ բանկային հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները և վճարման ենթակա գումարն ստանալու օրվան հաջորդող 12 ամսվա ընթացքում բանկ չեն ներկայացրել սույն պայմանագրի 1.2.2-րդ ենթակետում նշված պահանջը:»,

7) Պայմանագիրը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.4.6-րդ ենթակետով.

«2.4.6. կատարողի հետ փոխհամաձայնեցված կարգով և ժամկետներում շահառուի անվամբ բանկային հաշիվ բացելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը ներկայացնել կատարողին:»,

8) 3-րդ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն պայմանագրի 1.2.1-ին կետով նախատեսված ծառայությունների համար պատվիրատուն կատարողին վճարում է յուրաքանչյուր կենսաթոշակառուի համար ամսական երեսուն դրամի չափով փոխհատուցում, որը պատվիրատուն բանկ է փոխանցում տվյալ ամսվա կենսաթոշակի գումարի հետ միասին:

Սույն պայմանագրի 1.2.2-րդ ենթակետում նշված դեպքում կատարողը շահառուի անվամբ բանկային հաշիվ բացելու և գումարները շահառուին կանխիկ վճարելու համար ծառայությունների վարձավճար (կանխիկացման վճար) չի գանձում:»,

9) Պայմանագիրը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.5-րդ կետով.

«5.5. Սույն պայմանագրով՝ պատվիրատուի տրամադրած տվյալների հիման վրա դիմողի անվամբ անվճար բանկային հաշիվ բացելուն, սպասարկելուն վերաբերող և դրանց հետ կապված՝ սույն պայմանագրով սահմանված մյուս կարգավորումները կիրարկվում են (ուժի մեջ են մտնում) կողմերի միջև լրացուցիչ համաձայնագիր կնքվելուց հետո՝ համաձայնագրում նշված ժամկետից:»,

10) Պայմանագրի N 1 հավելվածի 2-րդ և 3-րդ կետերը «Կենսաթոշակառուի» բառից հետո լրացնել «կամ շահառուի (եթե շահառուն բանկում արդեն ունի իր անվամբ բացված բանկային հաշիվ)» բառերով:

II. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և համարվում է Կողմերի միջև կնքված Պայմանագրի անբաժանելի մասը:

3. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

III. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Կողմերի համաձայնությամբ:

5. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությամբ:

6. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

IV. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայություն	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ **ՀՀ, քաղ. Երևան, Նալբանդյան 13**	Գտնվելու վայրը՝ **ՀՀ, քաղ. Երևան, Երևան, Թումանյան 17**
Հեռ. (+374 10) 52 45 74, ֆաքս. (+374 10) 52 15 94	Հեռ. (+374 10) 51 05 10, ֆաքս.(+374 10) 51 05 73

էլ. փոստ՝ info@sif.am	էլ. փոստ՝ inecobank@inecobank.am
	Հ/Հ՝ 2050001900046315 ՀՎՀՀ՝ 02518512
Ծառայության պետ՝	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ գործադիր տնօրեն
Արմեն Աբրահամյան	Տարոն Գանջալյան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Սոցիալական ապահովության ծառայության և «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲ ընկերության միջև 2011 թվականի փետրվարի 21-ին կնքված՝ «Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման» պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք.Երևան «12» 12 2018թ.

Սոցիալական ապահովության ծառայությունը (այսուհետ՝ Կողմ-1), ի դեմս գլխավոր քարտուղար Վանիկ Բաբաջանյանի, ով գործում է «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի հունիսի 14-ի «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» N 74-Լ հրամանով հաստատված Ծառայության կանոնադրության հիման վրա, և **«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲ ընկերությունը** (այսուհետ՝ Կողմ-2), ի դեմս գործադիր տնօրեն Տիգրան Դավթյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (ասյուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 2011 թվականի փետրվարի 21-ին Սոցիալական ապահովության ծառայության և «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲ ընկերության միջև կնքված «Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով Պայմանագրի 5.1-ին կետը՝ կողմերը որոշեցին պայմանագրի 3-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների համար Պատվիրատուն Կատարողին վճարում է յուրաքանչյուր կենսաթոշակառուի համար տարեկան երեք հարյուր վաթսուն ՀՀ դրամի փոխհատուցում:

«Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի N 1 հավելվածի՝ 10 բաժնի, 09 խմբի, 02 դասի N 05 ծրագրի ֆինանսավորման համար սահմանված հատկացումների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1314-Ն որոշման համաձայն՝ 2018 թվականի համար պայմանագրի գինը սահմանվում է 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ:

Ընդ որում, Պատվիրատուն փոխհատուցման գումարը յուրաքանչյուր անգամ բանկին է փոխանցում միանվագ՝ կենսաթոշակառուի դիմումի հիման վրա, տվյալ բանկի միջոցով առաջին անգամ վճարվող կենսաթոշակի գումարի հետ կամ տվյալ բանկին փոխհատուցումը վճարելու ամսվան հաջորդող 12-րդ ամսվա կենսաթոշակի գումարի հետ

(եթե կենսաթոշակառուն այդ ընթացքում չի դիմել այլ բանկի միջոցով իր կենսաթոշակը վճարելու համար):

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և համարվում է Կողմերի միջև 2011 թվականի փետրվարի 21-ին կնքված Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից:

2.3. Սույն համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասությունների դեպքում կիրառվում է սույն համաձայնագրով սահմանված դրույթը:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Կողմերի համաձայնությամբ:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությամբ:

3.3. Սույն համաձայնագրի, ինչպես նաև Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Կողմերի հասցեները և ստորագրությունները

Սոցիալական ապահովության ծառայություն ք.Երևան Նալբանդյան 13 Հ/Հ 900011556348 ՀՎՀՀ 02505511 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Գլխավոր քարտուղար	**«ԻՆԵԿՈԲԱՆԿ« ՓԲԸ** ք.Երևան Թումանյան 17 Հ/Հ 2050001900046315 ՀՎՀՀ 02518512 Գործադիր-տնօրեն
[illegible]աբաջանյան	**Տ.Դավթյան**
Կ.Տ	Կ.Տ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-ԻՆ ԿՆՔՎԱԾ «ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «21» հունվարի 2019թ.

Սոցիալական ապահովության ծառայությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու), ի դեմս Ծառայության պետի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Պարոնյանի, ով գործում է «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի հունիսի 14-ի «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» N 74-Լ հրամանով հաստատված Սոցիալական ապահովության ծառայության կանոնադրության հիման վրա և «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Կողմ-2), ի դեմս գործադիր տնօրեն Տիգրան Դավթյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (ասյուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 2011 թվականի փետրվարի 21-ին Սոցիալական ապահովության ծառայության և «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲ ընկերության միջև կնքված «Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման» պայմանագրի 5.1-ին կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը հանմաձայնվել են 2011 թվականի հունվարի 21-ին կնքված «Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Պայմանագրի 2.3.5. ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.3.5. մինչև յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը պատվիրատուին տրամադրել այն կենսաթոշակառուների ցուցակը, ովքեր տվյալ ամսվա ընթացքում «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով ստորագրել են հայտարարություն: Ընդ որում, կենսաթոշակառուի կողմից հայտարարություն ստորագրել է համարվում նաև անձամբ կատարողի մոտ ներկայանալով՝ որևէ փաստաթուղթ ստորագրելը,»,

2) Պայմանագրի 2.3.6. ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.3.6. կողմերի միջև փոխհամաձայնեցված ժամկետներում պատվիրատուին տրամադրել մինչև տվյալ ամսվա վերջին աշխատանքային օրը (ներառյալ) իր հետ բանկային հաշվի պայմանագիր կնքած և (կամ) սույն պայմանագրի 1.7-րդ կետում նշված դիմում ներկայացրած կենսաթոշակառուների տվյալները,»:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և համարվում է Կողմերի միջև 2011 թվականի հունվարի 21-ին կնքված Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Կողմերի համաձայնությամբ:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությամբ:

3.3. Սույն համաձայնագրի, ինչպես նաև Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Կողմերի հասցեները և ստորագրությունները

Սոցիալական ապահովության ծառայություն ք.Երևան Նալբանդյան 13 ՀՎՀՀ 02505511 Հեռ. (+374 10) 52 45 74 Էլ. փոստ՝ info@ssa.am	**«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ** ք.Երևան Թումանյան 17 ՀՎՀՀ 02518512 Հեռ. (+374 10) 510510 Էլ. Փոստ inecobank@inecobank.am
Ծառայության պետի պարտականությունները ժամանակավոր կատարող	Գործադիր տնօրեն
_____Ա. Պարոնյան	_____Տիգրան Դավթյան
Կ.Տ	Կ.Տ